ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 օգոստոսի 2026 թվականի N 400-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 84-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 2-ի N 137-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի ապրիլի 18-ի N 567-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի N 1112-Ն որոշումները՝

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2017 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 84-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

   որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ տողի՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ձագիկավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել ՀՀ Սյունիքի մարզի մարզի «Ձագիկավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ կազմակերպության կանոնադրության փոփոխությունը սահմանված կարգով գրանցել Հայաստանի

Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

2026-08-27 17:57:02 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. օգոստոսի 27
ք. Կապան